

փայլուն լուսատուի, որ ծագել էր Հայկա-
կան աշխարհի խառնուրդ երկրակամարի միջից
և ուղարկվելու տարի լուսաշողունը յետոյ
ունենաւոցաւ, բողբոջով իր ետեւից այնպիսի
պայծառ զեւ, որով յաշխարհակ մեծ է հը-
ւ պարտաւայ ամեն մի հայ՝»:

1. ՄԵԼԱ 1900, Թ. 97.

Հ. Ղ. ՏԱՅԵԱՆ

Հ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՎՄԱՃԱՆԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՅԵԹՈՎՊԻԱ

(Շար. տե՛ս Բազմալէպ, 1937, էջ 138)

Շարունակելէ առաջ Հ. Յ. Թովմաճանի ուղեգրութիւնը, կ'արժէ որ հոս մէկ երկու նկատու-
ղութիւններ ընենք, և մանաւանդ մէջ բերուած Եթովպական ազատագրութեան պատմութեան
ըրուագին մէջ նշանակեալ հայկական շատ կարեւոր պարագայ մը՝ զոր յիշել կը մոռնայ Թովմաճան:
Ինչպէս տեսանք, 1540ին մահմետականներու պետական հարուածին դէմ Գլաւտիոյ քրիզտո-
նեայ նեկուսը քսան հոգւոյ պատգամաւորութեամբ աղբրագիր կը դրկէ Հոռոմի Ս. Քահանայա-
պետին՝ միջնորդելու Բորթուկէզ արքային քով, որ զայ և զիրենք ազատէ մահմետական ջարդարար
բռնակալութենէն:

Պատգամաւորութիւնը իր նպատակին կը հասնի. մահմետականներու զուլիք՝ Ահմատ-Իպն-
Իպրահիմ կը պարտուի 1541ին Բորթուկէզ բանակէն՝ որուն հրամատարն էր Քրիստոփամ՝ երեւելի
աշխարհախոյզ վաւարոյ տի կամայի որդին: Գլաւտիոյ վերստին իր գահին վրայ կը հաստատուի:
Տեղի կ'ունենայ ուղղափառ հաւատքի քարոզութիւնը եւրոպացի Յիսուսեան քարոզիչներով՝ որոնք
կէս-հրէական և դիոսկորեան մոլորութիւնները կը վերցնեն, վարելով նաեւ Պատրիարքական իշխա-
նութիւնը: 1632ին բնիկ կղերին դրոյմով կը ջարդուին սպիտակ քրիստոնեաները, Աղեքսան-
դրիայէն կը բերուի պատրիարք մը հին սովորութեան համեմատ և կը նորոգուին հին եղծ ու
մեղծ բարձրին և կրօնական մոլորութիւնները: 4 զար վերջ, (1555-1937), այսօր, հակառակ այդ
հին սովորութեան իտալական պետութեան միջամտութեամբ՝ Հապէշ Պատրիարքական աթոռի
վրայ կը բազմի բնիկ հապէշ մը:

Գիտելի է որ Թովմաճանի յիշած թուականները ուղիղ չեն:

Յիշեալ հապէշ ազատագրութեան զրուագին մէջ (1541) նկատելի է որ Հոռոմ և Փորթուգալ
պատգամաւորութիւն կատարող խումբին գլխաւորը հայ մըն էր Մատթէոս անուն, ինչպէս այսօր
իսկ հապէշ գաղութի հայեր պարծանքով կը յիշեն:

Աւելան սԻՍԱԿԱՆԻ «Հայք յԱփրիկէ» զրուագին մէջ (էջ 471) այս Մատթէոսը կը կոչէ «գարմա-
նալի այր կրօնաւոր և վաճառական» որ դեսպանութիւն կ'ընէ «ի կրկին արքունիս՝ Եթովպացւոց
(Հեղինեայ Թագուհոյն) և Լուսիտանացւոց Պորտուգալաց (Մանուէլի Թագաւորի)»: Եւ նոյն գրքին
մէջ, էջ 458, աւելի ընդարձակ յիշատակութիւն մը կ'ընէ «վաճառական Հայք... ի ՍՊԱՆԻԱ...
ՊՈՐՏՈՂԱԼ» բաժնին մէջ (458-459) նախ ըսելով թէ հինէն հայերը փորթուգալցիներուն հետ ծա-
նօթութիւն ունէին «հռչակաւոր դեսպանութեամբ ՄԱՏԹԵՍԻ հայազգւոյ վաճառականի ի Թագաւո-
րէն Եթովպիոյ առ Թագաւորն Լամանուէլ, ի սկիզբն ԺԶ դարու (1509-12)» և թէպէտ չեն
ամենեւին աներկբայ աւանդեալքն զՄատթէ, այլ ոչ յետ բազմաց պատմի և Պէրմուտէզի ընտրե-
լոյ պատրիարքի Եթովպաց տանել ընդ իւր ի Լիզպոնայէ Եթովպիա՝ (յամի 1538) երկուս հայո
զՍկոտլոն մականուանեալն Ֆրեանտեզ և Գաւապար Սոչրիսկոյ, Թերեւս Բերեացի (Ատրի)»: Եւն:

Յաւալի պարագան ան է որ — առ ալ բերանացի ամանութենէ գիտենք — երբ Մատթէոս իր
պատգամաւորներով և բուրթուգալեան բանակը Եթովպիա կը մտնեն, նա խորհուրդ կու տայ
սպասել եղանակի յարմար շրջանին՝. այդ վտանգաւոր կիրճերէն անմիջապէս անցնելու: Զօրավարը՝
անտեղեակ տեղական կլիմայի խաղերուն՝ կը պնդէ անդանդաղ շարունակել իրենց արշաւանքը:
Կիրճերուն մէջ (Յուլիս ամսուն) շատեր կը մեռնին տաքէն և թունաւոր միջատներու խաճուածքէն,
որոնց մէջ նաեւ հայազգի Մատթէոսը ազատագրումի շարժման ախոյեանը:

Հ. Խ. Փ.

(Դրոշագ հապէշական ազատագրութեան, բարբեր և սովորութիւններ)

Արդ՝ այս հրովարտակն ետ ի ձեռս այն
20 հապէշից և եղ զնոսա ի հինգ պա-
տրաստեալ նաւան և առաքեաց ի Միւ-
սեմպիկ:

Եւ գնացեալ հասին ի Միւսեմպիկ, և
տարեալ ետուն զթագաւորական հրովար-
տակն ի ձեռս ճէնեբալ սպարապետին:

Եւ նա մինչ ընթերցեալ ծանեաւ զհրա-
ման թագաւորի, իսկոյն ետ հանել ի նաւուց
զկահկարասի պատերազմին ի ցամաք և
զգօրսն զամենայն, և չու արարեալ ելին
ի Միւսեմպիկէն: Բայց քանզի յոյժ տա-
ժանելի էր ճանապարհն, զի ի բարձրա-
բերձ լեռանց և ի մեծամեծ անտառաց
պարտէին անցանել՝ յորս ոչ գոյր ճանա-
պարհ, այլ եւս բազում զետեք առանց կա-
մըրջի՝ ցելի և ջրադաշտ դժուարանց գոլով
հազիւ ի չորս ամիսն հասին ի սահմանս
Կեօնտէրու:

Իսկ այն ապստամբ մահմետականքն
իսկ այն ապստամբ մահմետականքն
որք տիրապետեալ էին զԿեօնտէր, երբ
լուեալ զայս թէ Բորթուկէզ Ֆրանկը գան
ոմբօք Թօփեօք, որք յոյժ երկնչէին ի
Ֆրանկաց և ի Թօփից նոցին, զի ինքեանք
զիտէին զգործածութիւնս նոցին, և մինչեւ
ցայսօր հապէշը եւս ոչ գործածեն զԹօփս:

Ուստի ընդ լսելն, թողեալ զքաղաքն
մահմետականք փախեան: Եւ ճէնեբալն
առանց ինչ պատերազմի մտեալ ի քաղաքն
տիրապետեցին զԿեօնտէր, և զՍիմոն կամ
Քիւստիօ թագաւորն իջուցին ի լեռնէ ան-
տի ուր են ցեղը թագաւորի, և նստուցին
ի յաթոռ թագաւորութեան միաց ի ձեռս տաճկաց
յապստամբութեան միաց ի ձեռս տաճկաց
Կեօնտէր ամս 10: (Թերեւս ամիսս: Ծ. հր.)

Եւ ապա աստ և անդ հռչակ աւետման
առաքելին, և զցրուեալ հապէշսն ժողովէին:
Եւ ուր ուրեք հասեալ գտանէին զմահ-
մետական ապստամբեալսն՝ չարաչար կո-
տորէին և դիւթաւալ կացուցանէին զնոսա:
Բայց յետ ամաց ինչ թոյլտուութիւն ելեալ
է մահմետականաց վերստին զալ և մտանել
ի քաղաքն Կեօնտէր, իբրեւ ստրուկ ռայէ,

և ոչ որպէս յառաջն խոնեալ բնակիլ ընդ
ըրիստոնէ հապէշից, այլ ի վայրագոյն
տեղուջ միախումբ բնակել և փոքր թուով:

1765 Այլ արդ յորժամ կատարեցաւ ա-
մենայն ինչ և նստաւ Սիմոն կամ Գլաւ-
տիօ թագաւորն ի յաթոռ իւր յիշեցուցանէ
նմա ճէնեբալն զխոստումն այնց քսանից
անձանց հապէշին, որ ի Հոռոմ որպէս
գնացեալ առաջի Պապին ետուն զուղղա-
փառ դաւանութիւնս ասելով, թէ մեք
բնաւքս ուղղափառ եմք, և ըստ այնմ
սրբազան Պապն զրեաց առ Բորթուկէզ
թագաւորն իմ, և նա զրեաց ինձ Միւ-
սեմպիկ ճէնեբալիս, թէ յետ առնելոյ զքա-
ղաքն Կեօնտէր ի յապստամբից և տալոյ
հապէշից, այլ և ըստ խոստմանց նոցին
պարտիս կարգադրել զեկեղեցիս նոցին
ուղղափառապէս, նա եւս կացուցես զմի
եկեղեցական գլուխ կամ եպիսկոպոս որ
ըստ այնմ հովուեսցէ զնոսա:

Յայնժամ Սիմոն կամ Գլաւտիօ թա-
գաւորն և այլք մեծամեծք, և այնորիկ
որ ի Հոռոմ գնացեալ էին, լի բերանով հաս-
տատէին, և ստուգեցեալ զբանս սպարա-
պետին, ընկալան և կարգադրեցին զա-
մենայն եկեղեցիս ուղղափառապէս: Այլ
եւս յիշել ի պատարագի զՊապն Գրիգոր
և զԲորթուկէզ թագաւորն Յովհաննէս:
Այլ եւս զմինն ի գիտուն և ի պատուաւոր
լաթին քահանայից ճէնեբալն ետ խորհրդ-
դովն թագաւորի գլուխ նոցա, որ մնացէ
անդ և հովուեսցէ զեկեղեցիս նոցին ի
դիպուկ ժամու:

Եւ թագաւորն Սիմոն կամ Գլաւտիօ
էառ ի պալատ իւր զայն լաթին քահա-
նայն և զամենայն պէտս և զոտճիկն տայր
նորին:

Արդ՝ ճէնեբալն յետ ուղղելոյ զթագա-
ւորութիւն հապէշի, և կարգադրելոյ զեկե-
ղեցիս նոցին ուղղափառապէս և յետ անցա-
նելոյ ամաց երից՝ կամեցաւ դարձ առնել:

Յայնժամ Սիմոն կամ Գլաւտիօ թա-
գաւորն հանդերձ իշխանօք իւրովը պա-
տրաստեցին զչորս ուղտս բռնաւորեալ

ոսկւով, այլեւս արարին զընթրիս մեծ ճէնէրալին, և յետ ընթրեացն թագաւորն ետ յառաջ բերել զայն չորս ուղտան ոսկւով ի տալ ճէնէրալին: Իսկ ճէնէրալն որ ի յիւր թագաւորէն արգելեալ էր առնուլ զվարձս, վասն որոյ ասէ. Զի՞ են այդորիկ, և չէ ինձ պիտոյ, զի ես զոհու թիւն Տեառն ունիմ զբաւական եկամուտս ի տեառնէ իմմէ թագաւորէս:

Բայց առ ի ոչ տհաճեցուցանելոյ զձեզ, զերկուսն ի յղտոցս առցուք, և տացուք զօրացս և քահանայից մերոց, որք յոյժ աշխատ եղեն ի դառնութենէ ճանապարհին: Եւ առեալ զերկուս ուղտան զայնոսիկ ոսկւով, և բաժանեաց ուրախութեամբ զօրաց և քահանայից իւրոց:

Այլեւս ի զօրաց իւրոց և ի քահանայից կամեցան մնալ ի Կեօնտէր իբր հարիւր անձինք, և ճէնէրալն թոյլ ետ ի մնալ. և Սիմոն կամ Գլաւտիօ թագաւորն հապէշու յոյժ սիրով և ուրախութեամբ ընկալաւ զնոսա, և մի ժամ հեռի ի Կեօնտէրէն ետ նոցա տեղի մի պատուական Պրեմոնայ կոչեցեալ, ուր կազմեցին իւրեանց տունս և բուրաստանս, և եկեղեցիս, և ամուսնացան ընդ դստերացն հապէշու, և սկսան բազմանալ: Եւ զայս տեղիս նոցա ինքն թովմաճանեան մահտեսի Յովհաննէսն անձամբ գնացեալ տեսեալ է, թէ՛ պէտ բնակութիւն ոչ զոլով այժմ աւելեալ էին: Եւ այն վերոյգրեալ լաթին քահանայն որ առ ի հովուել զեկեղեցիս նոցին մնաց ի պալատ թագաւորի, և գնացեալ առ թագաւորն Գլաւտիօ և ասէ ցնա՝ թէ ես ընդ քահանայից իմոց չեմք բաւական հովուել զբոլոր քաղաքս, այժմ որ այս ճէնէրալն որ յետս դառնալոց է, առաքեսցուք ընդ նմա առ Բորթուկէզ թագաւորն Յովհաննէս երրորդ, նախ թուղթս շնորհակալութեան ի կողմանէ քուսմէ և ի բոլոր իշխանաց և ի ժողովրդոց քոց: Այլեւս խնդրել միջնորդութեամբ Յովհաննէս թագաւորին Բորթուկիզաց ի Սրբազան Պապէն Հռոմայ զոմանս եկեղեցական արս իմաստունս, և զմի Պատրիարք առ ի հովուել զքաղաքս:

Եւ թագաւորն Գլաւտիօ արքայ՝ որդի

թագաւորին հապէշու, յոյժ հաւանեցաւ ընդ այս խորհուրդ, և ետ զբել այն մեծապատիւ Քահանային լաթիններէն առ Յովհաննէս թագաւորն և առ Պապն՝ թէ՛ վասն շնորհակալութեան և թէ՛ վասն խնդրուածոց եկեղեցական անձանց և թէ՛ վասն Պատրիարքութեան: Եւ ինքն թագաւորն Գլաւտիօս ստորագրեաց և ետ ի ձեռն այն օրհնեալ ճէնէրալին և մեծ հանդիսիւ թագաւորաւն և իշխանօք առաքեցին զճէնէրալն ընդ մնացեալ զօրաց իւրոց:

Եւ ի հասանելն ի Միւսէմպիկ քաղաք այն ճէնէրալն ընդ նաւուցն առաքեաց զնամակսն հապէշ թագաւորին առ Բորթուկէզ թագաւորն իւր Յովհաննէս երրորդ: Եւ յոյժ ուրախութեամբ ընկալաւ և ապա ինքն եւս Յովհաննէս թագաւորն Բորթուկէզու գրեաց ի Հռոմ առ ԺԳ. Գրիգոր Պապն և առ սուրբն Իգնատիոս Լոյլացի (որ ի նմին ժամանակի սկըսեալ էր նորապէս ծաղկիլ ի հիմնադրել զընկերութիւնն Յիսուսեան կարգին) զի առաքեսցէ յիւրոց հոգեւոր որդւոց որպէս միսիոնար յԵթովպիա ի Հապէշաստան:

Եւ հասեալ ի Հռոմ նամակն Բորթուկէզ թագաւորին և ընդ նմին նամակն հապէշ թագաւորին առ Գրիգորիոս Պապն, և հրամանաւ ծայրագոյն Քահանայապետին Գրիգորիոսի յանձնեցաւ սրբոյն Իգնատիոսի առաքել ի հապէշ զերեքտասան անձինս և եւս զբեալ զպատասխանին հապէշ թագաւորին Գլաւտիօս:

Եւ նա յանձն առեալ պատրաստեաց զերեքտասան գիտուն անձինս, յորոց զմինն ձեռնադրեցին Պատրիարք, և զերկուսն եպիսկոպոս օգնականս և յաջորդ պատրիարքին, և զայլ տասն կրօնաւոր ճիւղվիթից իմաստուն քահանայս:

Եւ սուրբն Իգնատիոս յետ պատրաստելոյ զանձինս 1555 թուին, և փետրվարի 23ին զրեաց պատասխան առ Գլաւտիօ թագաւորն հապէշից որ էր որդի Դաւթի թագաւորին, և ետ ի ձեռս իւրոց առաքելոց կրօնաւորացն: Եւ առաքեաց զպատրիարքն և զերկուս եպիսկոպոսն,

և զտասն կրօնաւորս իմաստուն քահանայս ի հապէշաստան ի քաղաքն թագաւորանիստ ի Կեօնտէր:

Չայսմ թղթոյ Ս. Հօր Իգնատիոսի խօսի երեւելի Հայրն Օրլանտինի պատմագրողն Ընկերութեան Յիսուսի: Եւ եւս Հ. Մաչէտոնն ի գիրս իւր մակագրեալն « Յաղագս պայծառ Բիէթրի »: Այլ եւս մասնաւորապէս խօսի զայսմանէ Արքայն Նիգոլոյ տէ Լակինայ:...

... Արդ յորժամ ի Ս. Իգնատիոսէ և ի ծայրագոյն ԺԳ. Գրիգոր Քահանայապետէն առաքեալն հասին ի հապէշ թագաւորանիստ քաղաքն Կեօնտէր՝ այսինքն է՝ Պատրիարքն, երկու եպիսկոպոսն և տասն ճիւղվիթ կրօնաւորքն, ընդ առաջ ելին սոցա իշխանքն, և այն հին լաթին մեծապատիւ բորթուկէզ քահանայն իւր եկեղեցականօքն հապէշից: Եւ թագաւորն հապէշից Գլաւտիօս մեծ ուրախութեամբ ընկալաւ զնոսա. և յետ զաւուրս ինչ պատուելոյ անդ ի պալատին՝ առաքեաց զնոսա ընդ այն առաջին լաթին քահանայի ի Պրեմոնայ գիւղն ուր էին ժողովեալք ամենայն բորթուկէզքն, որ յոյժ պատուական դաշտաւոր տեղի ջրահոս և բուրաստանք բազումք էին. և զամենայն պիտոյս նոցա առաքէր թագաւորն. և երկու անգամ ի շաբաթու պարտէին զնալ ի սեղան թագաւորին. և սկսան ուսանիլ զլեզուս նոցա և սերմանել աստ և անդ յամենայն եկեղեցիս զհոգեւոր պատուս իւրեանց: Ի տունջեան ի Կեօնտէր շրջէին քարոզութեամբ, և ի յերեկոյին գնային ի Պրեմոնայ գիւղն, ուր կազմեցին վանս և եկեղեցիս, և պտուղք բազումք լինէին և լուսաւորէին:

Արդ յորժամ սկսան վարել ուրախութեամբ և ուղղափառապէս զկեանս իւրեանց զամս հնգետասան կամ քսան, նախանձեալ ընդ այն բանսարկութիւն Բելիախանէն ի սիրտս հապէշու քահանայից ըստ ի տարի ի սիրտս հապէշու քահանայից զհին մոլորաշաւիղ աղանդս նոցա. որոյ վասն միաբանեալ քահանայք սկսան տրտնջիլ և ասել թէ զԲ է զի յեկեղեցիս մեր զայլ և այլ անուանս յիշեն, զՊապն Հռոմայ և զթագաւորն Բորթուկիզու, որ

յառաջն ոչ էր, և այն որ էրն և յիշէին զսուրբ Դէոսկորոս, այժմ ոչ յիշի, և ընդէր է այս: Այլեւս այն լաթին քահանայքն ո՞րք են որք մեր եկեղեցեացն իշխեն ըննելով և հրամայելով:

Եւ այսպէս միաբանեալ ամենայն քահանայք հապէշու ետուն զնամակ թագաւորին, թէ Մեր կամիմք զմեր զառաջին հին աղանդն նորոգել, և զայնոսիկ լաթին քահանայսն ոչ ընդունիմք: Այլ եւս այն լաթին Բորթուկէզք ոչ կամիմք թէ ի սահմանս մեր բնակիցին:

Եւ Սիմոն կամ Գլաւտիօ թագաւորն ընթերցեալ զնամակս նոցա կոչեաց զամենայն մեծամեծ իշխանսն և խորհեցան թէ այս որպիսի՞ ապերախտութիւն է զոր կամին առնել. զի եթէ նոքա, այսինքն Պապն և թագաւորն Բորթուկիզու ոչ օգնէին մեզ, մեք մինչեւ ցայժմ ցիր և ցան լինէաք, և մահմետականք իշխելոց էին:

Յայնժամ առհասարակ միաբան ամենայն իշխանք ասացին թէ՛ մեք թէ քստ կամաց քահանայից մերոց գնացուք, զուցէ դարձցին զօրքն Բորթուկիզու ի վերայ մեր. ուրեմն կերպիւ իւրեք զոմանս ի սոցանէ հանցուք ի կախաղանս, զի լռեսցեն այլքն:

Վասն որոյ և թագաւորն եհան հրաման, թէ ընտրեցէք ի ձէնջ զարս երկոտասան, որք եկեալ առ մեզ ի պալատն խորհեսցուք ընդ նոսա զլաւն, և զձեզ անհոգս արասցուք:

Եւ քահանայքն ի մէջ իւրեանց ընտրեցին զարս զլիաւորս երկոտասան, և առաքեցին ի պալատն: Եւ թագաւորն Սիմոն կամ Գլաւտիօ սիրով ընկալաւ զնոսա ասելով թէ յայսմ գիշերի կացջիւք աստ, և եկեսցեն իշխանք, և ապա խորհեսցուք ի միասին: Եւ ի մէջ գիշերի զայն զերկոտասան զլիաւոր քահանայսն հանին ի կախաղան շուրջ զպալատան:

Եւ ընդ առաւօտան ընդ այնոսիկ տեսեալ զայս իւրաքանչիւրոցն, ի փախուստ դառնային բնաւ հետեւեալքն: Այլեւս եհան թագաւորն զմունետիկս կարգալ՝ թէ ո՞րք յայս միտս կախեալ անձանցն իցէ:

մի՛ նստցի ի քաղաքս այլ ելեալ գնասցէ, ապա թէ ոչ գնոսա եւս այսպէս հանից ի կախաղանս:

Եւ այս երիցս անգամ այսպէս ապրաւ տամբեցան, և կախեցան: Վերջապէս գնացեալ արտաքոյ քաղաքին այս ապստամբ քահանայը զամբեցան իրր երեք հազար քահանայք և գնացեալ ի յայն Պրեմոնայ գիւղն ուր էին ֆրանկ Բորթուկէզը, յորս էին և այն լաթին Պատրիարքն և երկու եպիսկոպոսքն և իւր քահանայք, և շուրջ պատեալ զգիւղին յանկարծակի յարձակեցան ի վերայ նոցա ի մէջ գիշերայն թուփէնկով, բրօք, և քարամբ սպանին զամենեւեանսն, և զտունսն այրեցին և ապա եկեալ մտին ի Կեօնտէր փոխեցին զՍիմոն կամ զԳլաւտիոյ թագաւորն և զայլն եղին. և ի յեկեղեցիս իւրեանց մուծին զնախնի մոլորաշաւիզ զաղանդն իւրեանց հռչակել զԴէսոկորոսութիւնն:

Եւ ահա այսպէս ապերախտ գտան հապէշքն, և յայնմհետէ մինչեւ ցայսօրս տեն զազգն ֆրանկաց:

Այլ արդ՝ այժմ պատմեսցուք զկերպն սեղանոյ մեծամեծացն, զի այնոքիկ որ սպասաւորի ձեռք ճաշեն զկերակուրն՝ ի խորս է, վասն զի յերկու կողմն սեղանոյն դիգեալ կայ այն կակուղ հացն իւրեանց ի վերայ միմեանց մինչեւ երկու թզաչափ բարձրութեամբ, ուստի եթէ տեսաքն կամիցին եւս իւրեանց ձեռքն ճաշել ոչ կարեն, զի ինքեանք նստեալ են, իսկ սպասաւորքն ի յորս կալով հազիւ հասանին ձեռք նոցա ի խորս եղեալ կերակրոյն, և այսու պատճառաւ հարկաւորին սպասաւորի ձեռք ուտել. զի ի սեղանս մեծամեծաց սովորութիւն է նոցա դիգել զհացս բազումս: Այլեւս կերակուր եփողքն պարտին գալ և ներկայ գտանել ի սեղանի տեսառն և նախ քան զսկսել ճաշել տեսառն, այն եփողն առաջի տեսառն նախ պարտի ճաշել զամենայն տեսակս կերակրոց, և ապա սկսանին տեսառն ճաշել:

Նա եւս սորա գիւրին իր մի ունին իբրեւ զմանուն շինեալ առ ի համս տա-

լոյ կերակրոյ, զոր կազմեն և պահեն ի տան. և յորժամ պիտոյ լինի, դգալ մի դնեն ի նմանէ ի սան կերակրոյն, և պատուակաւ համով լինի. և նիւթն է այս. նախ զթարմ զէնճէֆիլ որ անդ բուսանի առատապէս, զսոխ և զսխտոր, զկարմիր պղպեղն և զաղն, լոսեն ի միասին բարեպէս և խառնեն և լինի իբրեւ զմանուն, և ի յամենայն տան առնեն զայս և իբր զբրովիժեօն (պահեստ) պահեն. և ի կերակուր եփելն ոչ աղ և ոչ այլ ինչ դնեն, այլ միայն յայն բաղադրեալ մանունէն դնեն դգալ մի և լինի յոյժ համով պատուական կերակուր:

Իսկ ըմպելոյ գինին եւս շատ զարմանալի և շահաւէտ ինչ է. զմեղրն բերեն ի փեթակէն, և չափով ինչ դնեն ի կարան, և նոյն չափովն վեցապատիկ դնեն ի կարասն զջուրն, ապա ծառոյ ինչ կեղեւ զոյ անդ, չորացուցանեն զայն կեղեւն և ծեծեն, և լինի մոխրագոյն փոշի. ի յայն փոշւոյ զերիս բուռս արկանեն ի կարասն, և հողոյ ցելիով և պնակաւ միով զբերանն կարասին ծեփեն, և շուրջ զկարասիւ դիգեն զչոր քակոր կովու բազում, և ապա յերից կողմանց լուցանեն զջուրն մինչեւ սպառեսցին քակորքն, և մնայ այսպէս զերիս աւուրս մինչեւ պաղի և զտի. ապա բանան զբերան կարասին, և ի մեղրն եղեալ մոմն՝ յերեսն մաքրեալ և զտեալ կայ, հանեն նախ զմոմն, ապա ի փոքր կարասիս և ի թէստիս ածեն զմեղրագինին լնուն, և զիւրաքանչիւրոցն բերանն ծեփեն ցելիով, և դնեն ի գետնափոր տունս մինչեւ ցաւուրս հնգետասան: Իսկ ի մեղրն եղեալ մեղուք և ճանճք և այլ աղտեղութիւնք, յատակս կարասին ժողովին, թափեն զայնոսիկ արտաքս. և յետ հնգետասան աւուրց սկանին ըմպել զայն մեղրագինին. բայց որպիսի համ է, զի զամենայն ծաղկանց անուշահոտութիւնն ի քիմս և ի բերանս ունելով հրճուին ըմպողքն. այլեւս զուարճուցանէ իբրեւ զժամս երիս կամ չորս, նաեւ զմիգի ճամբան բանայ, և յաճախակի միգէ. և ոչ որպէս զգինի խաղողոյ արբեցուցանէ. և

տես թէ որքան մեծ շահաւէտ և պատուական ինչ է այս մեղրագինին, որ թողմանան սովորեալ էր ըմպել զխաղողոյ գինի, ոչ ըմպէր, այլ առաւել հաճեալ էր այս մեղրագինւոյն. և զինի խաղողոյ եւս գտանէր յոյժ բազում:

Արդ ի յաւուրս պահոց միանգամ ուտեն ի կէս աւուրն զկնի ելանելոյ յեկեղեցոյն, և ըստ հայոց ի շարաթու գերկուս աւուրս պահեն՝ ի չորեքշաբաթու և յուրբաթու, բայց ուտեն զձուկն յաւուրս պահոց ըստ այսմ և ի մեծ պահս:

Եւ ի ծնանել երախայի արու (և թէ էջ) ութօրեայ թլփատեն և քառասնօրեայ մկրտեն և զրոշմեն: Եւ զրոշման իւղն է ձէթն զոր օրհնեն և զործածեն:

Եւ այս ծնեալ մանուկն յորժամ լինի երեք ամաց՝ երկայն մկրատով հատանեն զծայր փոքր լեզուին՝ որ ի կոկորդն, զի ի մեծանալն բարեւոք խօսեսցի: Յիմարու թիւն մեծ ընդ տգիտութեան. որով ի զուր ցաւով տանջեն զմանուկն: Քանզի ասէր նոցա թովմանան. Տեսէք զորդեակն իմ նոցա թովմանան. Տեսէք զբարեւոք խօսի, և զՊողոս, որ քան զձեզ բարեւոք խօսի, և զայս չեմ հատեալ զփոքր լեզու նորա: Չայս չեմ հատեալ զփոքր լեզու զնոսա: այսպէս ասելով ծաղր առնէր զնոսա:

Չաւուրս շարաթու իբր զկիսակիրակի պահեն, և ոչ այնքան ի գործս պարապին:

Այլեւս հրացանիւ ոչ հարկանեն, և ոչ որսան զթռչունս, և ոչ ուտեն զմիս նոցա: Եւ ոմանք եւս ընտանեցուցեալ են ի ձաւոց զառիւծն և ի տան պահեն և շրջին ընդ տեսառն իւրեանց...

Եւ դարձեալ, այս հապէշք այր և կին շրջին բոկ ոտիւք, և բաց զխով. և սպասաւոր կանայք միջաց ի վեր մերկ շրջին և միջաց ի վայր կաշիով միով պատեալ են: Իսկ այր սպասաւորք զկարճ վարտիք մի մինչեւ ի ծունկն ունին, և սաւանանման վերարկու ինչ արկեալ զանձամբ. բայց յորժամ ներկայանան առաջի տեսառն, յաշնժամ զայն վերարկուն զմիջան փաթութեն, և միջացն ի վեր մերկ կանգնին առաջի տեսառն...

Իսկ մեծամեծքն ի տան բոկ ոտիւք և բաց զխով շրջին. և յորժամ ելանեն ար-

տաքս յայնժամ ազանին զբապուճն որ է զկօշիկն, և զլուխ կօշիկն ուրեալ է ի վեր կոյս իբր զպոստանճիպաշիին խանձապաշ նաւակին նման: Եւ անդ կառք ոչ գոն, և ոչ գործածեն բնաւ. և մեծամեծքն հեծնուն ի լաւ ջորիս. իսկ միջակ անձինք հեծնուն ի ձիս:

Այլ և սոցա ձիքն և ջորիքն անպայտ են, զի անդ ամենեւին ոչ գոյ գործածու թիւն պայտի: Նա եւս ոչ կրեն զժամացոյց, և ոչ իսկ գործ ածեն զի ժամացոյց նոցա արեւն է. և զօրն ի չորս մասունս բաժանեալ են, և զմարդ մի կանգնեցուցեալ յանդիման արեւուն՝ հայրն ի ստուեր նորա, և ասեն՝ կէսօր դեռ չէ, զի երկրորդ մասն չէ լցեալ: Եւ կամ զկնի կէս աւուրն ասեն՝ դեռ երրորդ մասն չէ լրացեալ, և ի չորրորդ մասն չէ մտեալ, եւն:

Եւ այս հապէշու Պատրիարքն յաջորդարար հանապազ բերեն ի յԱղեքսան՝ զերիոյ ի Պետրոսի Աթոռն ի խրատոց վաճառ Ս. Մարկոսի, ընտրեն զմի ի միաբանից, և եպիսկոպոսացուցանեն, և տանին ի հապէշ, լինի պատրիարք. և այս միաբանքն խրատոց բնաւ են կոպիտ, տխմարք և անտեղեակ ի գիտութենէ, զի թովմանան ի վանս նոցա ի յԱղեքսանդրիա գնացեալ և տեսեալ է զնոսա:

Եւ քահանայք հապէշից բնաւ են ամուսնացեալք, և գոն եւս վարդապետք որք չեն ամուսնացեալք, որոց վերարկու փիլոն հանապազ պարտի լինիլ ի վերայ իւրեանց և ի վերայ փիլոնին բազում և անթիւ կերպասեայ խաչք գոն գոյնզգոյն, և են սորա քարոզիչք:

Եւ եկեղեցիք նոցա բազումք են և մեծամեծ և անուանի եկեղեցիք կլոր են որպէս օրինակն եղեալ եմ. և յամենայն եկեղեցի ըստ հայոց՝ մի մի պատարագ լինի, և պատարագի նշխարն մանր նկանակ է, և զկնի ժամուն ի նոյն չօրհնեալ նկանակ հացէն բաշխեն ժողովրդեան: Եւ ըստ սովորութեան հայոց քահանայից՝ պատարագող քահանայն ոչ գնայ ի տուն իւր, այլ ննջէ յեկեղեցին: Եւ իւրաքանչիւր եկեղեցիք ունին բազում քահանայս, որք յա-

